— Մըհեն այստեղ է, — ասաց նա, — երբ բոլորովին կառողջանաս, նա քեզ կը տանի Վան: Ասլանը այն տեղ մի քանի օր պէտք է մնայ: Դու դարձեալ կը գտնես նրան:

— Ես կը գնամ առաւօտեան, վաղ առաւօտեան: Ասլանը խոստացաւ սպասել ինձ առաջին իջեւանում, ես նրան սպասել չեմ տայ:

Առաւօտեան ինձ բոլորովին առողջ չէի զգում: Արեան չափազանց հոսումը բաւական թուլացրել էր ինձ: Բայց մի քանի օրից յետոյ ես կարող էի ձի նստել եւ ճանապարհ գնալ: Մարօն առաջարկեց Մըհէին ինձ հետը վեր առնել:

— Մըհէն ինչո՞ւ է եկել, — հարցրի ես:

— Նա եկել է մեզ տանելու, — պատասխանեց նա:

— Ո՞վ է ուղարկել:

— Հայրս:

— Ուրեմն ես ինչպէ՞ս կարող եմ նրան առնել ձեզանից:

— Մենք առանց նրան եւս կարող ենք գնալ:

— Հէնց ե՞ս կոյր հաւի պէս չեմ կարող մենակ ճանապարհ գնալ:

— Կարող ես, բայց ճանապարհը կը կորցնես: Բացի դրանից Մըհեն հորիցս նամակ ունի Ասլանի վրայ, պէտք է շուտով հասցնի:

Արեւը դեռ չծագած Մըհէի հետ ճանապարհը ընկանք: Նա ձի նստելու սովորութիւն չունէր: «Մեղք է, ասում էր, ապա ոտքերս ինչո՞ւ համար ստեղծել է աստուած»:

Մըհէն գնում էր իմ ձիու առջեւից, ահագին լախտը իր թեւի վրայ դրած: Նա լուռ էր, նա չէր խօսում եւ իմ հարցերին տալիս էր խիստ կարճ պատասխաններ:

Ես ճանապարհին հազիւ կարողացայ մտաբերել, թէ որքան անքաղաքավարի կերպով բաժանուեցայ Մարօից: Ես նրան ոչ մի խօսք չասացի. նա այնքանտեղ եկաւ ինձ հետ, նայում էր իմ վրայ, սպասում էր մի քաղցր խօսք լսել: Ես մտաբերեցի, որ իմ հեռանալուց յետոյ, նա իսկոյն չվերադարձաւ դէպի վրանը, այլ նստեց ճանապարհի մօտ մի քարի վրայ: Ես այժմս էլ յիշում եմ, թէ ինչպէս գլուխը քարշ գցած, նստած էր նա: Ես հարցրի Մըհէից: Մըհէն Մարօի մօտ էր, նա յետոյ եկաւ եւ հասաւ ինձ:

«Նա լաց էր լինում», ասաց իմ ուղեցոյց Հերքուլէսը:

— Ինչո՞ւ էր լաց լինում, Մըհէ: